Տաշիրի համայնքային սեփականությանը պատկանող գյուղատնտեսական նշանակության հողամասը վարձակալության իրավունքով տրամադրելու բաց մրցույթ

09.08.2021

Տիպ՝ Մրցույթի մասին հրապարակային ծանուցումներ
Հայտատու՝ Տաշիրի համայնքապետարան
,,Հրապարակային սակարկությունների մասին,, ՀՀ օրենքի 14-րդ հոդված

ՀՀ Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարանը հայտարարում է համայնքային սեփականությանը պատկանող գյուղատնտեսական նշանակության հողամասը վարձակալության իրավունքով տրամադրելու բաց մրցույթ: Մրցույթը տեղի կունենա 2021 թվականի սեպտեմբերի 13-ին՝ ժամը 11:30, Տաշիրի համայնքապետարանում՝ Վ. Սարգսյան 94 հասցեում:
Մրցույթի է դրվում հետևյալ լոտերը՝
Լոտ 1. Տաշիր համայնք, գյուղ Մեղվահովիտ 06-076-0311-0006 կադաստրային ծածկագրով 2-րդ կարգի խոտհարք, 3,552 հա, 10 տարի ժամկետով, 24500 մեկնարկային գնով:
Լոտ 2. Տաշիր համայնք, գյուղ Մեղվահովիտ 06-076-0311-0007 կադաստրային ծածկագրով 2-րդ կարգի խոտհարք, 1,857 հա, 10 տարի ժամկետով, 12800 մեկնարկային գնով:
Լոտ 3. Տաշիր համայնք, գյուղ Մեղվահովիտ 06-076-0311-0009 կադաստրային ծածկագրով 2-րդ կարգի խոտհարք 3,116 հա, 10 տարի ժամկետով, 21350 մեկնարկային գնով:
Լոտ 4. Տաշիր համայնք, գյուղ Մեղվահովիտ 06-076-0311-0010 կադաստրային ծածկագրով 2-րդ կարգի խոտհարք 1,99391 հա, 10 տարի ժամկետով, 14000 մեկնարկային գնով:
Լոտ 5. Տաշիր համայնք, գյուղ Մեղվահովիտ 06-076-0311-0011 կադաստրային ծածկագրով 2-րդ կարգի խոտհարք 1,78744 հա, 10 տարի ժամկետով, 13000 մեկնարկային գնով:
Լոտ 6. Տաշիր համայնք, գյուղ Մեղվահովիտ 06-076-0311-0013 կադաստրային ծածկագրով 2-րդ կարգի խոտհարք 1,48893 հա, 10 տարի ժամկետով, 11000 մեկնարկային գնով:
Հողամասի նկատմամբ սահմանափակումներ չկան, նրա օգտագործումը սերվիտուտ չի առաջացնում:
Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել.
ա/ հայտ,
բ/ մրցույթի մասնակցության համար սահմանված 2000 ՀՀ դրամի չափով վճարի անդորրագիր,
գ/ անձնագիր, իրավաբանական անձանց համար՝ հիմնադիր փաստաթղթերը:
Մրցույթին մասնակցելու հայտերի ընդունումը դադարեցվում է 2021 թվականի սեպտեմբերի 10-ին՝ ժամը 18:00-ին:
Մրցույթի անցկացման օրը վճարվում է նախավճար հողամասի մեկնարկային գնի 5 % չափով:
Մրցույթում հաղթող է ճանաչվում հանձնաժողովի եզրակացությամբ լավագույն պայմաններ առաջարկած մասնակիցը: Մրցույթում առաջարկված հավասար պայմանների դեպքում նախապատվությունը տրվում է Տաշիր համայնքի բնակչին կամ Տաշիր համայնքում գրանցված իրավաբանական անձին:
Մրցույթի կանոնակարգին մասնակիցները կարող են ծանոթանալ ամեն օր՝ ժամը 9:00–18:00

ընկած ժամանակահատվածում Տաշիրի համայնքապետարանի ճարտարապետության, գյուղատնտեսության, քաղաքաշինության և հողօգտագործման բաժնում:
Մրցույթը չկայանալու դեպքում կրկնամրցույթը անց է կացվելու 7 աշխատանքային օրվա ընթացքում՝ սեպտեմբերի 23 -ին:
Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել Տաշիրի համայնքապետարան (0254) 2-21-68, 2-34-06 հեռախոսահամարներով:

Հասցե՝ ՀՀ Լոռու մարզ,ք. Տաշիր,Վ.Սարգսյան 94

Հեռ.՝ (+374254) 2-29-31, 2-34-06

Էլ. փոստ՝ tashirhamaynq@bk.ru